ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 22 հուլիսի 2022թ.

2022 թվականի հուլիսի 07-ին, ժամը 16:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 37 բնակարանը Մարտիրոս Հակոբի Հարությունյանին անհատույց օտարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 35 բնակարանը Արթուր Շուռայի Մուրադյանին անհատույց օտարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14 բնակարանը Արման Արայիկի Մելիքյանին անհատույց օտարելու մասին», «Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** որոշումների նախագծերի մասին:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Ավետիք Ասոյանը, Արգամ Շառյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Աննա Սահրատյանը և Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը.

1.«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին»,

2.«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին»,

3.«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 37 բնակարանը Մարտիրոս Հակոբի Հարությունյանին անհատույց օտարելու մասին»,

4. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 35 բնակարանը Արթուր Շուռայի Մուրադյանին անհատույց օտարելու մասին»,

5. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14 բնակարանը Արման Արայիկի Մելիքյանին անհատույց օտարելու մասին»,

6.«Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Օրակարգի առաջին երկու՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին»*** հարցերի ձևավորման համար հիմք են հանդիսացել **«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ և 30-րդ հոդվածները, Հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1.1-րդ մասը և 66-րդ հոդվածի** *(Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը)*, **Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ և 34.2-րդ** կետերը:

Որոշվեց՝

հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին» որոշումների նախագծերին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ - 0

Օրակարգի հաջորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 37 բնակարանը Մարտիրոս Հակոբի Հարությունյանին անհատույց օտարելու մասին»*** հարցի շուրջ Մ, Եղիազարյանը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 44 սենյակի՝ (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենք 37 բնակարան) բնակիչ Մարտիրոս Հակոբի Հարությունյանի 2022 թվականի հունիսի 30-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 37 բնակարանը Մարտիրոս Հակոբի Հարությունյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

Բյուրեղավանի քաղաքապետարանի կողմից տրված Միասնական օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 43,44 սենյակները հատկացվել է Հարությունյանների ընտանիքին:

Մարտիրոս Հակոբի Հարությունյանը հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Որոշվեց՝

Հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 37 բնակարանը Մարտիրոս Հակոբի Հարությունյանին անհատույց օտարելու մասին»*** որոշման նախագծին և հարցը ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ – 0

Օրակարգի չորրորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 35 բնակարանը Արթուր Շուռայի Մուրադյանին անհատույց օտարելու մասին»*** հարցի վերաբերյալ Միշա Եղիազարյանը ներկայացրեց, որ հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 35 բնակարանի բնակիչ Արթուր Շուռայի Մուրադյանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի դիմումը և

համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն բնակարանային պայմանների բարելավման համար համայնքի սեփականություն հանդիսացող 2-րդ փողոցի 49 շենքի 35 բնակարանը անհատույց օտարել Արթուր Շուռայի Մուրադյանին:

Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի 30-Ա որոշմամբ 5 տարի ժամկետով Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 35 բնակարանը տրամադրվել է Արթուր Շուռայի Մուրադյանին: Հաշվի առնելով, որ Արթուր Շուռայի Մուրադյանը բնակվում է միայնակ, գտնվում է սոցիալապես անապահով վիճակում, նպատակահարմար է բնակարանային պայմանների բարելավման համար 2-րդ փողոցի 49 շենքի 35 բնակարանը անհատույց օտարել նրան:

Որոշվեց՝

Հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 35 բնակարանը Արթուր Շուռայի Մուրադյանին անհատույց օտարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ - 0

Օրակարգի հինգերորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14 բնակարանը Արման Արայիկի Մելիքյանին անհատույց օտարելու մասին»*** հարցի շուրջ Եղիազարյանը ներկայացրեց, որ հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 35 շենքի 63 բնակարանի բնակիչ Արման Արայիկի Մելիքյանի 2022 թվականի հուլիսի 08-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14 բնակարանը Արման Արայիկի Մելիքյանին անհատույց օտարելու հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

Արման Մելիքյանի ընտանիքը 1994 թվականից վարձակալությամբ բնակվում է Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքում: Նա սովորել է Բյուրեղավանի հիմնական դպրոցում, ապա ընդունվել «Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ: 2019 թվականի հուլիսի 8-ին զորակոչվել է բանակ: Մասնակցել է 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմին, ստացել է վնասվածքներ, ունի հաշմանդամության 2-րդ կարգ: Ընտանիքի անդամները չունեն մշտական աշխատանք, ունեն բնակարանային խնդիր:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման,

սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Արման Արայիկի Մելիքյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14 հասցեի 11.13 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Արման Արայիկի Մելիքյանին՝ ծնված 2001 թվականի հունիսի 27-ին, և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում Արման Արայիկի Մելիքյանի կողմից:

Որոշվեց՝

Հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14 բնակարանը Արման Արայիկի Մելիքյանին անհատույց օտարելու մասին»*** որոշման նախագծին և հարցը ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ – 0

Օրակարգի վերջին՝ ***«Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** հարցը ներկայացրեց Աննա Սահրատյանը: Բյուրեղավան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորումների համատեքստում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկվում է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար նաև համայնքի կամավոր խնդրի լուծմանը միտված սեփական լիազորություն:
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկել է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար օրենսդրական իմպերատիվ պահանջ է սահմանել, որ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծումը իրականացվի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 18-րդ հոդվածի դրույթները:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ - 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հայկ Վարդևանյան

_____ Արգամ Շառյան

_____ Ավետիք Ասոյան